այժմ զոհանանք իրականութիւնը պարզելով, որչափ որ մեզ հասանելի է նա, ի հարկէ:

Նոյն 1914 թուականին հաշիւներով եւ 1919-ին հայ պատուիրակութեանց կողմից Անդրկովկասի հայկական ճանաչուած եւ ճանաչել պահանջուած տերրիտորիայի վիճակագրական ամփոփումը հետեւեալն էր (կլոր թիւերով):

Երբ մենք այս վերջին ադիւսակի թուերն էլ համեմատում ենք 1916-ին, զեմստվային բարենորոգումների առթիւ կազմուած տուեալների հետ (տես վերը), տեսնում ենք, որ գրեթէ նոյնանում են նրանք. տարբերութիւնը փոքր է: Այնտեղ հայկական ողջ տերրիտորիայի բնակչութիւնը հաշուած էր 2,114,000, որից հայ՝ 1,298,000, այստեղ՝ ողջ բնակչութիւնը 2,072,000, որից հայ՝ 1,296,000:

X

Շատ դժուար է, ի հարկէ, գրեթէ անկարելի՝ պարզել ազգաբնակչութեան վիճակագրութեան պատկերը 1918-1922 թուականներին, Հայաստանի պետականութեան կազմակերպման տարիներում:

Նախ նրա համար, որ պատերազմը նոր էր վերջացել, երկիրը եւ ժողովուրդը նոր էին անցել աշխարհաւեր եւ հայաւեր փոթորիկների միջից. փոթորիկներ, որոնք քշել-տարել էին բազմահազար զոհեր նաեւ անդրկովկասեան հայութիւնից: Պակաս չէր թիւը և՛ մեր այն զոհերի, որոնք նետուեցին պատերազմի Մոլոխի որկորը՝ ռուսական բանակներում: Միեւնոյն ժամանակ շատ զոհեր էր տուել նաեւ թուրք-թաթար տարրը, դարձեալ ազգամիջեան կռիւների հետեւանքով: Տեղի էր ունեցել բնական ու անբնական տեղափոխութիւն եւս հայ ու թուրք-թաթար տարրերի՝ գաւառից-գաւառ, նահանգից-նահանգ, անդամ երկրից-երկիր: Ամէն ինչ փոխուող, հոսուն վիճակի մէջ էր այդ օրերին Անդրկովկասում եւ Հայաստանում. նաեւ վիճակագրութիւնը:

Ո՞ր ժողովուրդը, ո՞ր կազմակերպուած ու հին պետութիւնն էր մինչեւ իսկ, որ այդ եւ նման տարիներում, դեռ շատ աւելի նպաստաւոր պայմանների տակ, մարդահամար կատարել եւ փաստեր արձանագրել պիտի կարենար, որ նման բան մենք պահանջելու իրաւունքը ունենայինք այն տարիների հայկական իրականութիւնից: Դրա հետ մէկտեղ՝ վարչական եղանակով այնուամենայնիւ թուական տեղեկութիւններ հաւաքւում եւ ամփոփւում էին, որոնք սակայն, դժբախտաբար, պակսում են մեզ այժմ:

Այն տարիներին, յայտնի է, հիմնուել էր վիճակագրական կեդրոնական դիւան եւս, հանդուցեալ Բախչի Իշխանեանի ղեկավարութեան տակ, որ եւ կարգաւորել ու մաս-մաս հրատարակել սկսել էր Հայաստանին վերաբերեալ վիճակագրական տուեալները: Արդեօ՞ք անհետացան դրանք բոլորը եւ կամ Թաւրիզի չուկայում որպէս ապրանք փաթաթելու թուղթե՞ր ծախուեցին: Ինչ եւ է:

1918 թուականի մայիս 28-ին ի կեանս կոչուած մանուկ Հայաստանը տարածութեամբ եւ բնակչութեամբ իսկապէս որ մանրանկար օրգանիզմ էր,— ոմանց համար անսիրելի — չասելու համար ատելի — իսկ շատերի համար՝ առաւել եւս թանկագին եւ սիրելի, թէկուզ հէնց թոյլ, անուժ կազմուածքի համար:

Այդ Հայաստանը մի քանի ամիս շարունակ, գրեթէ ողջ 1918-ի ընթացքին, ոչ իսկ մէկ նահանգի մեծութիւն ունէր — տարածութեան եւ բնակչութեան տեսակէտից միանգամայն: Երեւանի նահանգի գաւառներից նրա մէջ էր մտնում ամբողջութեամբ Նոր-Բայազէտը միայն, Սեւանայ լճով մէկտեղ: Այնուհետեւ՝ աւելի կամ պակաս մասեր — Երեւանի ու Էջմիածնի գաւառներից ու Դարալագեազից — ընդամէնը 13 հազար քառակուսի քիլոմէթր եւ 6-700 հազար տեղացի ու փախստական ժողովուրդ:

Պատերազմի վախճանի հետեւանքով, երբ տաճիկները պարպեցին Անդրկովկասի եւ հայկական հողերի մեծ մասը, Հայաստանի Հանրապետութիւնն էլ տակաւ ընդարձակուեց տարածութեամբ ու մեծացաւ բնակիչների թուով, մանաւանդ որ սկսուած ներգաղթը առաջ էր տարուում թափով: Ինչ խօսք, Անդրկովկասի հայկական հողերի հաւաքումը այդ տարիներին եւս չաւարտուեց, բայց մի անդամ սկսած գործը առաջ էր ընթանում արդէն, թէեւ ոչ առանց մեծ ու փոքր դժուարութիւնների եւ անյաջողութիւնների:

Երկու տարուան ընթացքում, 1918-ից մինչեւ 1920, Հայաստանը տարածութեամբ